

այնքան գեղեցիկ կերպով կ'արտայայտուի երբ կ'ուզի իր խօսքը եպիսկոպոսներու համախմբումին մէջ եկեղեցիներու միութեան առթիւ: Դարձեալ եղիշէ պատմագիրն է որ նահատակուող Յովսէփ Կաթողիկոսին բերանը կը դնէ սա տողերը. «Եւ գհաւատս որ ի Քրիստոս ընկալեալ ի սուրբ Եպիսկոպոսապետէն Հոովմայ», կրկնելով և շեշտելով հաւատքի միութեան մեծ ճշմարտութիւնը:

Մեր հայրենի գանձերուն մէջ ահա, ըսաւ Հոգեւոր Տէրը, կը գտնենք կոչը և հրաւերը միութեան, և որքան կարգաւոր գանձեր, այնքան աւելի կը հաստատուինք ու կը սփոփուինք: Չինն ու Ամերիկացիին չունին այս միութարութիւնը զոր մենք ունինք, որովհետեւ ունինք այդ աւանդութիւնը մեր Հայրերուն մէջ, ու պէտք է որ հայ ազգը ուժանայ իր փառապանծ նախնիքներէն: Մինչև այսօր այսքան սքանչելի և պանծալի օր տեսնուած է մեր ազգին մէջ, այսքան պանծալի օր հայ ծէսի և հայ անունին համար, երբ Սիքստեան Մատրան մէջ մեր Ս. Պատարագի արարողութիւնը կատարուեցաւ ու գովուեցաւ և մեզի հետ նաեւ բովանդակ Արեւելքը:

Բայց այս բոլոր ուրախութեան գեղունայնքուն մէջ, աւելցուց, խոր ցաւով լեցուն է Մեր սիրտը, վասն զի մեծ մասը Ազգիս զաւակներուն անտեղեակ են այս մեծ շնորհին և շատերն ալ դեռ պիտի ուզեն նսեմացնել յիշատակն ու նշանակութիւնը. սակայն այդ ամէնը պիտի չկարենան շիջուցանել Մեր մէջ այն սէրը՝ որ ունինք մեր Ազգին հանդէպ: Ս. Պօղոս Առաքեալը յանձն կ'առնէր նգովուի իր ազգայիններէն, առանց դադրելու աշխատիլ անոնց դարձին և փրկուլթեան համար: Անշուշտ կայ մեր ազգին մէջ մեծ նախապաշարում մը, որ գիտութեամբ և մեր Ս. Հայրերու լոյսով պիտի փարատի և ասով պիտի դիւրինայ և պիտի հարթուի ճամբան մեր ազգին խմբական գործունէութեան:

Այս խորհրդածութիւնները, ըսաւ, սիրով կ'ընեմ Մեծն Միսիթարի յարկին տակ, որուն ասպնջականութիւնը այնքան ստէպ վայելած է. և դեռ թարմ է յիշատակը այն շուրջ երկու շաբթուան անցուցած քաղցր օրերուս Ս. Ղազարի մէջ: Միսիթարեան Միաբանութիւնը ձգտած է միշտ ջերմ պահել այս բարձր նպատակը, լուսաւորութեամբ օգտակար ըլլալու ազգին: Կար ժամանակ մը, և թերեւ հիմա ալ, որ քրիստոնէական վարդապետութեան և հոգեւոր կեանքի վերաբերեալ գրքերը միայն Միսիթարեան տպարանէն լոյս կը տեսնեն: Միսիթար Աբբահայր ինքնին Նախախնամութենէն սահմանուած մարդն էր, որ անցնելով Արեւելքէն Եւրոպա, եղաւ փրկարարը իր ազգին. ինչպէս Յովսէփ Նահապետը իր եղբայրներուն Եգիպտոսի մէջ. կապեց իր նաւակը Պետրոսի անշարժ Վէմին, կազմեց ազգին վերանորոգման համար լուսամիտ ծրագիր մը ու աւանդեց զայն որպէս կտակ իր արժանաւոր զաւակներուն: Իր դէմքը պիտի մնայ յաւէտ իբրեւ սրբազան առաջնորդ ուղղիչը հաւատքի և լուսաւորութեան առաքելներուն:

Կ'ըսեմ այնքան սիրով, որովհետեւ վստահ եմ որ Միսիթարի Տունը պիտի ըլլայ մեծ զօրավիգը այս մեծ իղձին, որ այլեւս անհրաժեշտութիւն մը դարձած է բոլոր Հայութեան:

Ուղղելով ապա իր խօսքը Գերպ. Աբբահայր, մեծապէս շնորհակալ եմ, ըսաւ, այսքան սիրուն ու հաճելի հանդէսին համար, շնորհակալութիւն բոլորին կողմէ արտայայտուած ազնիւ զգացումներուն, շնորհակալութիւն Միսիթ. Հայկական Ճեմարանին Պատուոյ Նախագահութեան Տիտղոսին համար: Մաղթեց յետոյ որ Միսիթար արժանանայ փութով Ս. Խորաններու փառքին, և անոր պանծալի ու լուսածնունդ զաւակները հրճուին անոր անձին ու գործին փառաւորութեան մէջ:

ԽՄԲ.

ԲԱՆԱԹՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵԻ

Վսեմ. Գերերջանիկ Հոգեւոր Տէր

Սրբազնազոյն Քահանայապետին այն տնօրինութիւնը, որով 32 բարձրաստիճան եկեղեցականներ կոչուեցան Եկեղեցւոյ իշխան ըլլալու, ոչ միայն պատմական եւ համաշխարհային տեսակէտով աննախընթաց բնոյթ ունի, այլ որոշ նշանակութիւն՝ աշխարհի նոր կարգերու հաստատումին մէջ:

Երբ մէկ կողմէն մարդկային ընկերութիւնը միւրճուեցաւ քառասուն աղջամուղջի մը մէջ, միւս կողմէն այդ քառասունը միայն յանդիման բարձրացաւ լոյսի համատեղեցական ժայթքում մը որ կարծես ըլլար արեւ մը, որ իր մէջ կը խտացնէ, կը նոյնացնէ, կը շաղուէ զանազան երանդներ եւ որոնցմէ միայն մաքուր սպիտակութիւն մը կ'երեւնայ, իբրեւ միութեան խորհրդանշան:

Այս է իմաստը Քահանայապետին նշանակալից որոշումին: Հոգ չկայ ցեղերու, զանազանութիւն, ազգերու խտրութիւն, մեծերու եւ փոքրերու անհաւասարակշիռ եւ խտոր համեմատութիւն, այլ կայ հիմնական միութիւն մը, արմատական հաստատութիւն մը, անբաժանելի եղբայրութիւն մը, կրօնքին համատեղեցական դրոշմով կնքուած:

Այսպէս կը տեսնենք, ամէնէն հարածուած եւ ամէնէն անտարբերութեան ենթարկուած ազգի մը ներկայացուցիչը՝ կը բազմի հաւասար տիտղոսով եւ դերով, ամենահզօր պետութիւններու՝ արդէն տիեզերական հոշակ վայելող եկեղեցականներու քով. կամ՝ դեռ կիսավայրենի Մօղամպիքի մը նման զաղթավայրի մը Եպիսկոպոսը միեւնոյն պատիւը կը վայե-

լէ առաջին զաղթային կայսրութիւնները ստեղծող Պետութիւններու բարձրագոյն եկեղեցականներու քով. կամ Փոլոնիոյ եկեղեցականներու ներկայացուցիչները, կամ Չինաստանի ներկայացուցիչները, Բրուսիոյ կամ Միւնսթէրի Եպիսկոպոսներուն համարժէք, այսինքն նախնիքն նորուն հոգեւորականները անոնց քով որ այդ րապէս զոհուածները անոնց քով որ այդ նախնիքը սփռողներուն դէմ կ'ընդվզէին եւ հերոսաբար կը մաքառէին իրենց իսկ երկիրներուն մէջ...:

Ամէնքն ալ իշխաններ այսօր...

Իշխան մը քաղաքական մարդին մէջ, կրնայ բարձրանալ կամ դահալիժիլ, կըրնայ խոթող մարտիկ մը ըլլալ կամ խեղճ մը: Բայց ոչ մէկ ատեն, չէ՛՛ ճուղ նոխաղ մը. բայց ոչ մէկ ատեն, այն խաղաղութեան պաշտպան ախոյեան մը:

Եւ ահա այստեղ է իր ճղճիմութիւնը: Մինչդեռ Եկեղեցիին համար կոչուած ծիրանաւոր իշխանը միշտ կը մնայ իր արանաւոր խաղաղութեան վրայ, որովհետեւ մենավսեմ բարձրութեան վրայ, որովհետեւ ան կոչուած է ըլլալ մի միայն խաղաղութեան կրօնքին իշխան, եւ պէտք է ըլլայ միեւնոյն ատեն, ծառայողը, սպասաւորը մարդկութեան: Այս երկու հանգամանքներուն մէջ է իր մեծութիւնը, իր անվկանդ ուժը, իր անխախտ եւ զօրեղ հպարտ եւ վէս կեցուածքը աշխարհի բոլոր մանր իրականութիւններու առաջ, որոնք կու գան կ'երթան, կ'անցնին ու կ'անհետան:

Եթէ այս է մեծ Քահանայապետին նոր ձեռնարկին իմաստը եկեղեցական եւ համաշխարհային տեսակէտով, ունի նաեւ

ուրիշ նշանակութիւն մը մասնաւորապէս, մեզ Հայերու համար:

Վսեմափայլ Տէր.

Ձեր Ծիրանաւոր Իշխան կոչուելը ցոյց կու տայ՝ թէ անձի մը անհատական բարձրը յատկութիւնները, ամենալուրջ եւ մաքրակրօն բարեմասնութիւնները, գիտական եւ ընկերային դաւանանքներու հմտութեամբ պաշարուած արժանիքները, ինչպէս նաեւ իր կողմէն միեւնոյն ազգի մը անջատուած զաւակներուն մէջ, եղբայրական ոգիի ուժեղացման ձեռնարկները, վերջապէս իր ամբակուռ հաւատքը Մարդկութեան կրօնին եւ մարտիրոսուած ազգին հանդէպ, բնական է այս ամէնը կրնան դնահատուել եւ դնահատուած են արդարադատ, ամենապայծառ իմացականութեան մը կողմէ, որ Առաքելական Գահին վրայէն, աշխարհային գործերու մէջ, բարձրագոյն արդարութիւնը կիրարկելու սրբազան պաշտօնը ստանձնած է Եկեղեցիէն:

Բայց, Վսեմափայլ Տէր, թող ներուի ինձ ըսելու, անհատական անդին ուրիշ հանգամանք մը կայ Ձեր կոչումին մէջ իբրեւ Ծիրանաւոր, եւ այդ՝ ա՛յն է որ, Մեծ Քահանայապետը, ինչպէս ինձ իսկ յայտնուեցաւ այսօր, ուզած է մատուցանել հարկը առաջին նախափայլ եւ մարտիրոս Ազգին, անոր համետ զաւակը Եկեղեցւոյ ամենաբարձր աստիճանին կոչելով:

Եւ աւելին.

Երէկ, Ս. Պետրոսի կից՝ Քափիկելա Սիսիւնայի մէջ, պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Ձեր Վսեմափայլ Անձը Ս. Պատարագ մատուց հայերէն լեզուով, եւ հոն ներկայ խաղաղութեան Մեծ Առաքելը՝ Հայերէն լեզուով բացազանչեց՝ «Խաղաղութիւն ամենեցուն»։ պահ մը պիտի ուզէի թափանցել այդ արարքին խորը, եթէ կարողանայի, անոր բուն իմաստը արտաբերելու տենչանքով:

Պիոս ԺԲ. ամենադժբախտ օրերուն դահ բարձրացաւ եւ առաջին օրէն չղաղրեցաւ երբեք պայքարել Մարդկութեան՝ ամենամեծ պատուհաս՝ պատերազմի արհաւիրքին դէմ. ոչ մէկ առիթ կորսնցուց տարհամոզելու մտամոլոր բնաղդայնացած մարդկութիւնը, որ վայրենութեան մէջ կը փնտռէր իր մեծութիւնը:

Եւ իր առաջին հրովարտակէն, նշանաւոր շրջաբերականէն մինչեւ պատերազմի Ս. Ծնունդի պատգամալիրը, եւ միւս Ծնունդներու առթիւ պաշտօնական ուղերձները, կամ իր բոլոր Յայտնութիւնները, մինչեւ վերջերս նոր քարտինալներու ընտրութեան առթիւ իր ուժեղ առաքելական հաւատամքը, կամ անոնց ի պատիւ դիւանագիտական երիցագոյն անդամին խօսած ճառին տուած խորհրդալից պատասխանը, չվարանցաւ երբեք ցոյց տալու ո՛րն է նոր մարդկութեան ուղին, ո՛րն է այն խաղաղութիւնը որ կրնայ պատերազմը ջնջել եւ իրականացնել մեծ Վարդապետին մեծ պատգամը. Խաղաղութիւն եւ Սէր. երկու բառեր՝ որոնց վրայ հիմնուած է իր նուիրական կրօնը:

Չլուեցան մեծ Քահանայապետին այդ իմացական եւ իմաստասիրական խոր պարունակութեամբ եւ կուռ հիւսուածքով առաքելական ազդարարութիւնները, եւ երկրի վարիչները աշխարհը վերածեցին խաւաքարտէ խեղճուկ դոց տուփի մը, հոն բանտարկելով ամբողջ երկիրներու բաղամալիլոն բնակչութիւնները. եւ իբրեւ անոնց պաշտպանութիւն՝ հիւլէներու տարբաղադրիչ ուժանակ մը դուրս բերին եւ անոր վրայ զետեղեցին այդ խաւաքարտէ տուփը՝ աշխարհը...

Վտանգը մեծ է եւ շատ աւելի զարհուրելի քան ինչ որ էր երէկ. եւ մեծ Քահանայապետը, ճիշտ այդ վտանգին ի տես, եւ կանգնող անոր դէմ, ոչ միայն ուղեց նոր տիեզերական բարոյականութիւն մը գոյացնել, որպէս զի դոնէ անով

* * *

կարողանայ դիմադրաւել այդ վտանգին, այլ այս անգամ հարկադրուեցաւ լսեցնել ամբողջ աշխարհի, ամբողջ մարդկութեան «Խաղաղութիւն ամենեցուն»ի անմիջական անհրաժեշտութիւնը եւ ոչ թէ նախընտրեց, այլ պէտքը դրաց, բացազանչել դայն այն ժողովուրդի լեզուով որ խաղաղութեան մեծ կրօնքին մշտական մարտիրոսը եղած է, եւ քսան դարեր շարունակ կրցած է ազգովին նախափայլ նահատակ տիրոսը իրեն վերապահել:

Ահա ասոր համար, ինք, Քահանայապետն իսկ ըսաւ «Խաղաղութիւն ամենեցուն»ը այդ ժողովուրդի հարազատ լեզուով: Կարծես ըսել ուզէր. «Գոնէ սա միլիոններով նահատակուած ժողովուրդին եւ ժողովուրդներու ի սէր եւ ի յարգանս լսեցէք, ո՛վ մարդկութիւն աշխարհի, ո՛վ վարիչներ երկիրներու, «Խաղաղութիւն ամենեցուն»ը, դոնէ այս անգամ երբ ե՛ս կը բացազանչեմ ձեզ այդ ժողովուրդի լեզուով որ նահատակութեան խորհրդանիշը եղաւ, այն լեզուով որ Քրիստոսի թուականէն վեց հազար տարիներ առաջ խօսուած էր դոնէ այդ լեզուով ըսուած «Խաղաղութիւն ամենեցուն»ը թող աղղէ ձեր սրտերուն, թող տիրէ ձեր մտքերուն, քանի որ այդ լեզուն խօսող ժողովուրդը ոչ միայն դարե՛ր, դարե՛ր, դարեր ամբողջ նահատակուած է ազգովին խաղաղութեան կրօնքին սիրոյն, այլ նաեւ առաջինը եղած է ան որ Քրիստոսի եւ Առաքելներու հետ միաբերան բացազանչած է. «Խաղաղութիւն ամենեցուն»:

Մեծ Քահանայապետը յառած այդ ժողովուրդի տոկունութեան, կարծես հիացումով կ'ուզէ արտայայտուել, կարծես անոր լեզուով ինք իսկ զոչելով այսօր «Խաղաղութիւն ամենեցուն»ը, կ'ուզէր վերջին ճիգ մը թափել, կ'ուզէր հրաշք մը գործել ազատելու համար մարդկութիւնը, ազատելու համար խաղաղութիւնը:

Անդրադառնալով այդ ժողովուրդի նահատակութեան, կ'ուզեմ վերստին աչքիս առջեւ բերել մէկ պատկեր միայն, պարզուկ հայ քահանային ուրուագիծը, դեռ շուրջառակիր, ծերունի, խորշոմած պատկանելի գլուխը, ճերմակ մօրուքի ցանցին հետ արիւնով ներկուած, անջատուած մարմինէն մինչդեռ թեւը բարձրացած, կը յայտնէ որ նոյնիսկ գլխատումէն ալընթարթ մը առաջ, խաղաղութեան նշանը թարթ մը առաջ, խաղաղութեան նշանը կու տար... իր վրայէն կ'անցնինք մանուկներս, ծերերու հետ ոտքերնիս արիւնած...

Մեծ Քահանայապետը տեսաւ հայ քահանային այդ պատկերը, դոնէ դէմ յանդիման տեսութեան ներքեւ այն յայտնութիւնով, որ միայն մեծերուն ուժն է, եւ անոր համար չէ՞ որ հիացումով դարձաւ զէպի այդ ժողովուրդը եւ ուղեց ազադակել դէպի այդ ժողովուրդը «Խաղաղութիւն ամենեցուն»ը: Այդ քահանան մէկը հազար հազարներէն, փառքի մասին ոչ մէկ անգամ իսկ մտածած, մարդկութեան անծանօթ սուրբերէն մին է:

Որքան ալ թանկագին ըլլայ այդ ազգին անունը Ձեր անձին եւ խայտայ իր արիւնը Ձեր երակներուն մէջ, չեմ անդիտանար որ Ձեր վսեմութեան դիրքը շատ փափուկ է, ամենէն փափուկը Ձեր հին եւ նոր ծիրանաւոր եղբայրներու շարքին մէջ: Բայց ինչո՞ւ որդիական յարգանքի համար հոս ինչո՞ւ որդիական յարգանքի համար հոս չեմ անդիտանար, հիմակուրէն՝ իսկ, եւ հաւաքուողներս, հիմակուրէն՝ իսկ, եւ վաղը, եթէ կարելի ըլլայ Ազգին մէջ՝ յանձնառու չըլլանք Ձեզ, Ձեր այդ փափուկ դիրքէն դուրս բերել — եւ կենդանի ապացոյցը տալու հայերու մշտական եղբայրութեան: Ինչո՞ւ երկու համայնքներ որոնք նոյնն են, չնկատուին միշտ նոյնը ամբողջապէս:

Միակ տարբերութիւնը որ կայ այդ երկու համայնքներուն մէջ, այդ կը խտա-

նայ սա պատկերին մէջ. ահ մը կայ որ վտակի մը, գետի մը վերածուելով, ծովը կը թափի, կը միանայ համայնատարած ովկիանին: Ահա այդ վտակը հայութիւնն է եւ ովկիանը քրիստոնէական կրօնքի տիեզերական համաստեղութիւնը: Դժբախտաբար գետին ճամբան խոտորոզներ եղած եւ ակերուն ջուրերը սխալ ճամբաներով ընթացած են, ճահճներու մէջ թափուած են եւ այդպէսով գոյացած է ժխտական ուժերու պայքարը՝ Անորոշութեան եւ Տգիտութեան մէջ եւ այդպէսով երեւութապէս անջատու մերեւան եկած է:

Բայց եղած է հսկայ մը, որ հայ մշակոյթին եւ պատմութեան վերաշինութեան եւ ծանօթացումի ամենածանր աշխատանքէն դուրս, մտածած միեւնոյն ատեն եւ մեծ մասամբ յաջողած է, գետակին ունեցած խոտորումները յարգարել եւ իր բնական ընթացքին մէջ առաջնորդել զայն: Այդ հսկան Մխիթար Արքան է, որուն յիշատակին, պիտի խնդրէի որ մատուցուէր յոտնկայս յարգանք... եւ ամէն հայու մէջ մնար երախտագիտութեան

մնայուն զգացումը այդ հայ առաքեալի հանդէպ:

Վսեմափայլ Տէր, Անկէ վերջ, Ձեզ կը վիճակի վերջնականապէս հեռացնել այդ խոտորոզները եւ կասեցնել այդ խոտորոզները, կոթնելով Մխիթարի երկու զաւակներուն՝ երկու Մխարանութիւններուն, մշակոյթի մեծ դերը եւ Դուք՝ ստանձնելով երկու հարազատ եղբայրներու մէջ, հիմնական եղբայրութեան զաղափարը զօրացնելու ընդհանուր գերը եւ պատրաստելու Անոր Յարութիւնը:

Վսեմափայլ Ծիրանաւոր Տէր, Կրկնակ է Ձեր դերը, եւ մենք հպարտ ենք որ հայ Ծիրանաւորը իր բաժինը կը բերէ իր Ազգին մէջ այդ եղբայրութիւնը ամբողջելու եւ թէ զօրավիշ ըլլալու ընդհանուր մարդկութեան համար հիմնական խաղաղութեան հաստատումի դերին մէջ, ներկայի մեծ Վարդապետին ցուցմունքով: Դարը պէտք է որ փոխուի, եւ պէտք է որ հայ մըն ալ տայ եւ հայեր ալ տան իրենց իւրովսանը մեծ Յեղաշրջումի մեծ գործին:

Թ. ԳԱՌՆԻԿ

Նախկին աշխատակից «Բիւզանդիոն»-ի



ՎՍԵՄ. ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ ԵՒ ԱՆԴԱՄ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

Երբ Կաթողիկէ Եկեղեցւոյ դերագոյն Պետը իր առաքելական իշխանութեամբ մեծամեծ ազգերու ընտրելագոյն զաւակներուն հետ եւ անոնցմէ առաջ զՁեզ կը պատուէ դասելով Ս. Եկեղեցւոյ իշխան եւ դերագոյն խորհուրդին անդամ եւ իրեն անմիջական խորհրդական ու գործակից, երբ ազգային եւ օտար Հաստատութիւններ եւ համայնքներ իրարու հետ կը մրցին հանդիսաւոր ցոյցերով Աստուծոյ մատը տեսնել Ձեր բարձրութեան մէջ եւ հոգեւին խնդակցիլ, չէր կրնար լուռ մնալ Մխիթարեան Ուխտը: Ահա հոս է ան իր Գլուխով եւ անդամներու բազմութեամբ, որոնք յետ մասնակցելու այնքան յուզիչ եւ խանդավառ ցոյցերու, իրենք ալ կը զգան պարտքը եւ հարկը առանձնապէս եւս արտայայտել զեղումը իրենց անվերապահ եւ անխառն սիրոյն՝ հանդէպ Ձեր սրբազան եւ շնորհալի անձնաւորութեան:

Պարտք՝ երախտագիտութեան. եւ արդարեւ ի՞նչպէս կարելի է մոռնալ Ձեր բացառիկ սէրն ու գուրգուրանքը Մխիթար Արքաճօր անձին եւ իր սուրբ Տան հանդէպ. սէր սկսուած Ձեր մանկութենէն ու տակաւ առ տակաւ աճած այս սուրբ քաղաքին մէջ, յետոյ ի Լիբանան այնքան գուրգուրանքով, յետոյ ի Ս. Ղազար անպատու քաղցրութեամբ. եւ մենք առանց յուզումի չէ որ կը զիտակցինք այս բախտին:

Պարտք՝ խնդակցութեան. քանի որ Դուք արժանաւոր զլուխն էք այն Հայ հասարակութեան, որուն մէջ մի նախկին հա-

ւատացեալը գինն է քրտինքին եւ սիրոյն նոյն ինքն Մխիթար Արքաճօր եւ իր քաղաքի զաւակներուն, որոնք հետզհետէ հաստատեցին ուղղափառ հաւատքին մէջ՝ դեղեկողները եւ ուժացողները ջերմացուն եւ օրէ օր ստուարացուն նուիրական հօտը, որ խմորը պիտի ըլլայ ամբողջ Հայ զանգուածին:

Անդրադոյն խնդակցութիւն մը որ պարծանք մըն է արդար մեզի համար, եթէ ներքէք յիշեցնել թէ Դուք Ձեր նախնիքներով պտուղն էք առաքելութեան սրբանուն եւ առաքելական Խաչատուր Վ.ին սուն եւ առաքելական Խաչատուր Վ.ին ու յետոյ Մխիթարեանի մը՝ Հ. Եփրեմ Սեթեանի, որ իսկապէս հոգեւոր հայրն եւ առաջնորդն է եղած Ձեր եւ մեր սիրելի Ախալցխային, եւ ուր ցարդ կը պահուին անոր նշխարները գրեթէ սուրբի մը յատուկ պաշտամունքով:

Գերերջանիկ Հոգեւոր Տէր եւ Վսեմափայլ Ծիրանաւոր, նկատելով հոգեկան այսչափ կապեր ու շարժառիթներ, աւելցնելով անոնց վրայ մտքի եւ սրտի այնքան սխրալի ձիրքեր զոր առատօրէն հաճած է Աստուած շնորհել Ձեզի, եւ այդ ամէնուն քով Ս. Քահանայապետին կողմէ տրուած ծիրանիի անդուգական պատիւը, Մխիթարեան Ուխտս ալ որպէս զբաղանջ ցոյց իր ամենախոր սիրոյն եւ յարգանքին՝ կը փութայ խնդրել Ձեզմէ որ հաճիք ընդունիլ տեսակ մը Մխիթարեան քաղաքացիութիւն, այն է Պատուոյ Նախագահութիւն եւ անդամակցութիւն Մխիթարեան Ուխտի Հայկական Ճեմարանին: